ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ
(ըստ հնագիտական նյութերի և անտիկ գրավոր աղբյուրների)

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Բանալի բառեր - Հայկական լեռնաշխարհ, տեղաբնիկներ, երկրագործական մշակույթ, դաշտավարություն, հնագիտական պեղումներ, վաղ բրոնզի դարաշրջան, ուշ բրոնզի դարաշրջան, վաղ երկաթի դարաշրջան, երկաթի լայն տարածման դարաշրջան, սկզբնաղբյուրներ:

Հնագիտության և հնեաբուսաբանության տվյալների ու գրավոր աղբյուրների (սեպագիր արձանագրություններ, անտիկ՝ հունա-հռոմեական, միջնադարյան հայ սկզբնաղբյուրներ, օտար և հայ ճանապարհորդների ուղեգրություններ, գեղարվեստական գրականություն), բանահյուսության ու դաշտային ազգագրական հետազոտությունների համաձայն Հայկական լեռնաշխարհը համարվել է հացահատիկային, բանջարաբուծության, բոստանային կուլտուրաների մշակության, այգեգործության, խաղողագործության, գինեգործության, յուրացնող ու օժանդակ տնտեսաձևերի առաջացման ամենահնագույն կենտրոններից մեկը:

Հնագույն երկրագործության ուսումնասիրության տեսակետից չափազանց կարևոր են քարե այդ վավերագրերը, որոնց վրա փորված են երկրագործական, դաշտամշակության գործիքներ: Սյունիքի ժայռապատկերներում առկա է տեսարան, որն ըստ երևույթի, նման է արորի՝ լծված եզներով, և որ վերաբերում է վաղ բրոնզի դարաշրջանին (Ք.ա. 3500-2400 թթ.): Սա արորի գյուտի ամենահնագույն հավաստումն է: Ժայռապատկերներում երևում են քառանիվ սայլեր, որոնք օգտագործվել են երկրագործության մեջ, դրանց լծված են եղել եզներ: Ուշագրավ է, որ նման սայլեր գտնվել են Սևանի ավազանում Ե. Լալայանի և Հ. Մնացականյանի պեղումների ժամանակ: Հայաստանի տարածքում հայտնաբերվածները աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ[1]:

[1] Այս մասին առավել հանգամանալի մասնագիտական ուսումնասիրություններ տե՛ս **Սարդարյան Ս.**, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 113-122, նկ. 24-29; **Կարախանյան Գ. Սաֆյան Պ.,** Սյունիքի ժայռապատկերները // Հայաստանի հնագույն հուշարձանները, N 4, Ժայռապատկերներ, պրակ 1, Երևան, 1970; **Իսրայելյան Հ.,** Գեղամա լեռների ժայռապատկերները // Հայաստանի հնագիտական հուշարձաններ. 6,

Հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութեր. Հնագիտական նյութերով հայտնաբերված է, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները դեռևս նեոլիթյան (Ք.ա. IX-VI հազ.) դարաշրջանում հավաքչությունից անցել են հողագործության և որսորդությունից՝ կենդանիների ընտելացման: Հանդես են եկել իրենց ուրույն ճարտարապետությամբ բնորոշվող բնակավայրեր, զարգացել է բնակարանային ճարտարապետությունը (օր. Առատաշեն, Արմավիրի մարզ և այլն): Կացարանների ներսում՝ կենտրոնում ունեցել են կավից կամ քարից պատրաստված օջախներ, հասել են փայտի, քարի, ոսկրի մշակման կատարելության, հյուսել են խսիր, կողով, ձկնորսական ցանց, բուսական թելերից՝ կտավ, պատրաստել են կավե ամաններ և այլն: VII-VI հազ. Ք.ա. նեոլիթյան հուշարձաններից Արարատյան հովտի Առատաշեն և այլ հուշարձաններում հնագիտական պեղումներից հայտաբերվել են ցորենի և այլ մշակաբույսերի բազմաթիվ մնացորդներ[1]:

Պղնձի և քարի դարի (Ք.ա. V-IV հազ. 1-ին կես) մշակույթին բնորոշ բնակատեղիներում (Շամիրամ Ալթի՝ Վան քաղաքի շրջակայքում, Թեղուտ՝ Էջմիածնի մոտ, Ակնաշեն, Առատաշեն՝ Արմավիրի մարզում, Ծաղկունք, Աղստևի հովտի (Տավուշի մարզ), Քյուլ-Թափա (Նախիջևան), ընդհուպ մինչև ներկայիս Վրաստան՝ Կախեթի), հայտնաբերվել են նյութական մշակույթի լավ պահպանված նմուշներ, մետաղե, ոսկրե ու քարե հարյուրավոր աշխատանքային գործիքներ (բրիչներ, բազալտե աղորիքներ, սանդեր), երկրագործության, անասնապահության, արհեստների, առավելապես խեցեգործության բազմաթիվ առարկաներ: Այդ իրերն ու առարկաները կարևոր սկզբնաղբյուր են ոչ միայն տնտեսության հիմնական

Ժայռապատկերներ, պրակ 2, Երևան, 1971; **Մարտիրոսյան Հ.,** Գեղամա լեռների ժայռապատկերները//Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 11, Ժայռապատկերներ, պրակ 3, Երևան, 1981; **Գասպարյան Բ., Սարգսյան Գ.,** Ժայռապատկերների նորահայտ խումբ Գեղամավանի «Կարմիր քարանձավում» // Հայաստանի հնագույն մշակույթը, Տ. Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2003, էջ 5-12; **Թոխաթյան Կ.,** Հայաստանի ժայռապատկերների բովանդակությունը // ԲՊՀ, N 2, էւ 180-193: **Թոխաթյան Կ.,** Ժայռապատերները Հայկական լեռնաշխարհում հայոց հարակայության վկաները // «Հարք» հայագիտական հանդես, 2006, N 1, Երևան, էջ 53-59; նույնի՝ Հայաստանի ժայռապատկերները նախնադարյան արվեստի համատեքստում // «Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱԱ», 2015, N 2, էջ 368-381; տե՛ս **Նահապետյան Ռ.,** Ժայռապատկերները Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների ազգագրական ուսումնասիրության սկզբնաղբյուր // «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, N 3, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, 2013, էջ 276-289:

[1] Տե՛ս **Овсепян Р.**, Палеоботанические материалы Араташенского неолитческого поселения (предварительные результаты исследований 2003-2004 гг.) // Культура древней Армении, XIII. Материалы респуб. науч. конф. Ереван, 2005, с. 51-53.

ճյուղերը, այլև կենցաղային ու մշակութային աղերսների մանրամասն ուսումնասիրելու համար[1]:

Էնեոլիթյան հուշարձանների նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանի երկրագործը լայնորեն յուրացրել է բազմաթիվ շրջաններ ցանքատարածությունների համար, ծանոթ է եղել ոռոգման պարզունակ եղանակներին, ուներ հողամշակման, բերքահավաքի և երկրագործական մթերքները վերամշակելու աշխատանքային բազմաթիվ գործիքներ, որոնցով և բնորոշվում է ժամանակի երկրագործական տնտեսության բնույթն ու մակարդակը: Այսպես. Շամրիամ Ալթիի, Թեղուտի, Ծաղկունքի, Աղստևի հովտի բնակավայրերում, հայտնաբերվել են ոսկրե սրածայրեր, խոշոր անասունների սնամեջ ոսկորներից և քարերից պատրաստված բրիչներ, կտրող գործիքների վանակատե ու կայծքարե դանականման շեղբիկներ, բազալտե աղորիքների, սանդերի ու վարսանդերի բազմաթիվ նմուշներ, որոնք օգտագործվել են հողի փխրեցման, բերքահավաքի և մթերքների վերամշակման աշխատանքներում: Այսպիսով, բրիչային երկրագործությունը էնեոլիթյան տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էր:

Էնեոլիթյան և վաղ բրոնզեդարյան երկրագործությանը բնորոշ էին հացաբույսերի խառը ցանքերը: Ցորենն ու գարին բնիկների հիմնական սննդամթերքներն էին: Թեղուտի կացարաններում հում աղյուսների և հարդի խառնուրդի մեջ հայտնաբերվել են մեծ քանակությամբ ցորենի ու գարու հատիկներ[2]: Բացի հացաբույսերից, բնրիկներն ունեցել են նաև երկրագործական բազմաթիվ այլ կուլտուրաներ: Ինչպես ուշ նեոլիթյան, այնպես էլ էնեոլիթյան տնտեսության մեջ երկրագործության հետ մեկտեղ շարունակում էր զգալի դեր կատարել հավաքչությունը, որը վաղ երկրագործական տնտեսության հիմքն էր:

Վաղ բրոնզի դարաշրջան (Ք.ա. 3500-2400/2300 թթ.). Վաղ բրոնզեդարյան հուշարձանների պեղումները (Թեղուտ, Շամիրամ-Ալթի, Թյուլ--Թափա, Շենգավիթ բնակատեղիներում) բազում տեղեկություններ են հավաստում Հայկական լեռնաշխարհի բնակչության տնտեսական կենցաղի, զբաղմունքների մասին: Այսպես, Մոխրաբլուրի հետազոտությունների ժամանակ հայտնաբերված պատվարները վկայում են զարգացած երկրա-

[1] Տե՛ս **Թորոսյան Ռ.**, Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը, Երևան, 1979; **Եսայան U.,** Հայաստանի հնագիտություն, Երևան, 1992; **Чубинишвили Т.**, К дервней истории Южного Кавказа, Тб., 1971; **Мунчаев Р.**, Кавказ на заре бронзогого века, М., 1975; **Бадалян Р., Аветисян П.** и другие, Поселение Араташена, Հին Հայաստանի մշակույթը, XIII, Եր., 2005, էջ 34-41:

[2] Տե՛ս **Մարտիրոսյան Հ.,** Հայաստանը էնեոլիթի (պղնձեքարեդարյան) ժամանակաշրջանում // Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, ՀՍՍՀ, ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 116, 118:

գործության մասին[1]: Հայկական լեռնաշխարհը հատկապես կուլտուրական ցորենի հնագույն հայրենիքն է եղել: Երկրագործության զարգացման բարձր մակարդակի վկայություն են նաև վաղ բրոնզեդարյան այլ բնակավայրերում պեղված ցորենի բազմաթիվ շտեմարան-հորեր (Էլառ, Շենգավիթ և այլն): Շենգավիթում հայտնաբերված ցորենը և գարին պատկանել են ամենատարբեր և ամենաընտիր տեսակներին. ցորենը կլոր հատիկ, փափուկ, իսկ գարին՝ մերկահատիկ և թեփուկավոր:

Վաղ բրոնզեդարյան տնտեսության կարևոր նվաճումներից մեկը քարե խոփերով, երբեմն նաև սեպաձև (Շրեշ բլուր, Նախիջևանի Քյուլ-Թափա) ու պարզունակ արորի և լծկան խոշոր եղջերավոր անասունների օգնությամբ վարուցանկ անելն էր: Երկրագործության նոր մակարդակին համապատասխան՝ փոխվում և զարգանում են նաև հնձի գործիքների տեսակներն ու ձևերը: Հանդես են գալիս առաջին մետաղե մանգաղները: Մի շարք բնակավայրերում հայտնաբերվել են նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման և պահպանման հսկայական համալիրները, ինչպես նաև գյուղամթերքների վերամշակման գործիքներ՝ աղորիքներ, սանդեր և հնագույն ոռոգման ցանց: Այդպիսին էին Արագածի լանջերին տեղադրված ոռոգման համալիրները: Սրանց առկայությունը ցույց է տալիս բրիչային երկրագործությունից անցումը արորային հողագործության՝ խոշոր անասունների, իբրև քաշող ուժի առկայությամբ:

Հայկական լեռնաշխարհի բնակլիմայական պայմանները նպաստավոր են եղել մի շարք արժեքավոր տեխնիկական բույսերի՝ ձիթատու, եթերայուղատու, թելատու և այլն աճեցման համար: Հայտնաբերվել են նաև այգեգործական մշակույթին բնորոշ շատ տարրեր. ծիրանի կորիզի գտածո Գառնիի Ք.ա. III հազ. շերտերից: Հետևողականորեն կիրառվող սելեկցիայի միջոցով ստեղծվել էին խաղողի տեղական բարձրորակ տեսակներ (Արցախ՝ Ուզերլիկ-Թեփե, Ուտիք (Ղազախ), Վայոց ձոր՝ Արենի և այլն) [2]:

Հայկական լեռնաշխարհը համարվել է նաև գինեգործության ամենահինագույն օրրանը: Այդ են վկայում հնագիտական պեղումներից՝ հատկապես Արենի բնակավայրի մոտ՝ Արենի-1 քարանձավում (Վայոց ձոր) V-IV հազ. Ք.ա. գինու արտադրական համալիրը, որն աշխարհում դեռևս զուգահեռներ չունի և համարվում է հնագույնը, որն, ի դեպ, ուղեկցվում է թաղման յուրօրինակ համալիրներով: Ընդհանուր առմամբ քարայրի ներսում առկա առանձնահատուկ միկրոկլիմայի շնորհիվ օրգանական ծագում ունեցող նյութերը խիստ լավ են պահպանվել, ինչի շնորհիվ այստե-

[1] Տե՛ս **Ջալալբեյան Լ.,** Մոխրաբլուրի պատվարները //«Պատմաբանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1974, N 4, էջ 157-162:

[2] Տե՛ս **Арзуманян П.,** Плодоводство и виноградарство Армянской ССР, Ереван, 1973, с. 182-183.

ղից հայտնաբերված գործվածքների, կաշվե, փայտե, ոսկրե, մետաղե առարկաների, ինչպես նաև հնաբուսաբանական ու մարդաբանական մնացորդների ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում որոշակի պատկերացում կազմել քարայրի հնագույն բնակիչների գյուղատնտեսական և տարաբնույթ արտադրական ու տնտեսական գործունեության մասին: Նշված իրերի շարքում եզակի է առաջին էնեոլիթյան հորիզոնից հայտնաբերված աշխարհի հնագույն կոշիկը, որը հասակագրվում է Ք.ա. IV հազ. կեսերով[1]:

Ք.ա. III հազարամյակի կեսին Հայկական լեռնաշխարհը թևակոխում է շենգավիթյան մշակույթի քայքայման և իրար հաջորդած Թռեղքվանաձորյան, Սևան-արցախյան և Կարմիր բերդյան մշակույթներով փոխարինվելու ժամանակաշրջան: Բնորոշ է դառնում տափաստանային և հարթավայրային գոտիների բնակչության մի մասի հաշվին լեռնային շրջանների հողագործական-անասնապահական բնակավայրերի ընդլայնում՝ կլիմայի չորացման և Հին Արևելքում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի պատճառով: Ուշագրավ է Ուրմիո լճի ավազանում Ուզերլիկ Թեփե բնակավայրում բացված 70 հորերի՝ լցված ցորենի ու գարու պաշարով և կորեկի ալյուրով[2]:

Միջին բրոնզեդարյան դարաշրջանում բարձր մակարդակի է հասնում նաև գինեգործությունը: Խաղողի հայտնաբերված մոտ 500 տեսակի տեղական կորիզների առկայությունը համոզիչ վկայում է Հայկական լեռնաշխարհի խաղողի և գինեգործության հնագույն հայրենիք լինելը[3]: Վանա լճի ավազանում Ք.ա. III հազ. գինու արտադրության և հնարավոր է նաև Հարավային Միջագետք արտահանման վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կարելի է քաղել Գիլգամեշի մասին միջագետքյան էպոսից[4]: Ըստ շումերական բնագրերի՝ Հայաստանից՝ Արատտայից, Միջագետք գնացած մեր նախնիները եղել են քաղաքակրթական առնվազն հինգ ոլորտների կրողներ ու տարածողներ՝ ա) դպրության, բ) մետաղամշա-

---

[1] Տե՛ս **Գասպարյան Բ.,** Արենի – 1 քարայրի ուսումնասիրության հիմնական արդյունքները//Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերերը», Զեկուցումների դրույթներ, Երևան, 2013, էջ 77: Ավելի հանգամանալի տե՛ս նաև **Обосян С.**, Виноградарство и виноделие // Армяне, Серия «Народы и культуры», Москва, 2012, с. 124-131, **Հարությունյան Ս., Քալանթարյան Ա.** և ուրիշներ, Գինին հայկական ավանդական մշակույթում, Երևան, 2005, էջ 26, 27:

[2] **Кушнарева К.Х.,** Южний Кавказ IX-II тысячелетиях д.н.э., СПб., с. 271-272.

[3] **Вавлилов Н. И.,**Дикие сородичи плодовых деревьев Азиатской части СССР и Кавказа и проблема происхождения плодовых деревьев // Избр.труды, М.-Л., 1960, том 2, с. 349; **Арутюнян А.,** Виноградарство и виноделие в Армении, Ереван, 2007, с. 12.

[4] **Дьяконов И.,** Эпос о Гельгамеше, М.-Л., 1961, с. 208-209; Գիլգամեշ, 1963 (Նշան Մարտիրոսյանի թարգմանությամբ); Գիլգամեշ (Էդ. Սարոյանի թարգմանությամբ) // Հին Արևելքի պոեզիա, Երևան, 1982, էջ 101-169:

կության, գ) ճարտարապետության, դ) հացի մշակության,ե) այգեգործության, որը ենթադրում է այլ ոլորտներ ևս, ինչպես օրինակ՝ գինեգործությունը[1]: Արատտա լեռնային երկրում, որի տնտեսության մեջ առաջնային դեր է խաղացել անասնապահությունը, կարևոր դեր է խաղացել նաև երկրագործությունը, հիշատակվում է ցորենի և սիսեռի մշակության մասին: Երկրագործական մթերքների պակասը լրացնելու համար արատտացիները հացահատիկ են ներմուծել հարթավայրային Շումերից՝ փոխարենն այնտեղ արտահանելով մետաղներ ու թանկարժեք քարեր[2]:

Ուշ բրոնզի (1500 – 1200 թթ. Ք.ա.) և վաղ երկաթի (Ք.ա. 1200 – 800 թթ.) դարաշրջան. Այս դարաշրջաններում բնակավայրային կյանքը ապրում է նոր վերելք. ձևավորվում է բնակավայրերի և ամրոցների աստիճանակարգ՝ Դվին, Լազարավան, Մեծամոր, Ավան, Լճաշեն: Ըստ Հ. Մարտիրոսյանի ուսումնասիրությունների՝ ինչպես Արևելքի երկրագործական մարզերում, այնպես էլ Հայաստանի դաշտային շրջաններում յուրաքանչյուր «համայնական տուն» բաղկացած էր կլոր ու քառանկյունի շինությունների միատիպ, մեկուսացված խմբերից: Կլոր կացարանների շուրջը համախմբված քառանկյունի շինությունները՝ իրենց մեծ ու փոքր հորերով, ամբարներով հանդերձ՝ հացահատիկի պահեստներ էին, իսկ շինությունների մյուս մասը գոմեր՝ ընտանի կենդանիների համար: Այստեղ որոշակի դասավորություն ունեն կավակերտ երկարուկ նստարանները, հատակի մեջ թաղված կարասներն ու պատի մի անկյունում պատրաստված օջախը: Օջախների մոտ հաճախ գտնվում են սանդեր, ծեծիչներ, աղորիքներ: Կացարանի կենտրոնական մասում փորված է հացահատիկի հորը, որի եզրին կանգնեցված է պտղաբեր կնոջ կերտվածքով քարե կուռքը[3]:

Ք.ա II հազարամյակի վերջին դարերում երկրագործության բարձր զարգացման մասին են խոսում ոչ միայն կավե ամանեղենի վրա պահպանված բուսական հարուստ զարդապատկերներն ու պտղաբերության կուռքերը, այլև վար ու ցանքսի, բերքահավաքի ու գյուղատնտեսական մթերքների վերամշակման գործիքները՝ բազմաքանակ ու բազմազան: Առանձնապես մեծ թվով են ներկայացված կիկլոպյան բերդերի ապառաժ քարերի մեջ կողք-կողքի փորված տաշտակները, բազալտե քարերից պատրաստված սանդերն ու սանդակոթերը, մակույկաձև ու քառանկյունի

[1] Տե՛ս **Մովսիսյան Ա.,** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 102:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 97:

[3] Տե՛ս **Мартиросян А.,** Горад Тейшебаини, Ереван, 1961, ст. 28-31; նույնի՝ Армения в эпоху бронзы и ранного железа, Ереван, 1964, ст. 160-190; նույնի՝ Հայաստանը զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանում // Հայ ժողովրդի պատմություն, հ.1, էջ 226-227:

աղորիքները, փայտից ու վանակատից պատրաստված կամերի մնացորդները և այլն:

Երկաթի լայն տարածման դարաշրջան (Ք.ա VIIIդ. սկզբից). Թոփրակ-կալեի (Ռուսախինիլի) պեղումների ժամանակ հայտնաբերվել են հողամշակման և բերքահավաքի բարձր զարգացածության երկաթե գործիքներ՝ խոփեր, եռաժանիներ, մանգաղներ, բահեր, ուրագներ, նաև մթերքներ պահելու կավե ամաններ:

Թեյշեբաինի պեղումներից, Թոփրակկալեից, Հայկաբերդից, Շուշանցից հայտնաբերված հնագիտական նյութերը հավաստում են դաշտամշակության, այգեգործության, խաղողագործության, գինեգործության, բանջարաբոստանային կուլտուրաների մշակության բարձր զարգացած լինելու մասին: Թեյշեբաինի հացահատիկի շտեմարանների պաշարների տարողությունները չափվել են մի քանի հազար «կապի»-ներով (Վանի թագավորությունում տարածված կշռի միավոր): Մշակվել են մերկահատիկ և հնագույն ծագում ունեցող կլորահատիկ ցորենի մի քանի տեսակներ: Կորեկը և գարին ծառայել են նաև որպես հումք խմիչքներ պատրաստելու, իսկ քունջութը՝ ձեթ ստանալու համար[1]: Էրեբունիում, Արգիշտիխինիլիում հայտնաբերվել են գինու վիթխարի մառաններ՝ խոշոր կարասներով[2]: Որպես պալատական համալիրի կարևոր տարր՝ միջնաբերդերի տարածքում հիմնականում գոյություն են ունեցել պահեստներ՝ իրենց մեծածավալ կարասներով, որոնք նախատեսված են եղել գինու, հացահատիկի և այլ սննդամթերքների պահպանման համար: Կարմիր բլուրից (Ք.ա I հազ.) հայտնաբերվել են հնձաններ ու վիթխարի մեծության 480 գինու կարասներ: 1958թ. այստեղ բացված գարեջրի պատրաստման արհեստանոցում գտնվել է տուֆից մեծ չափերի կոնք՝ լցված գարիով և 40-ից ավելի ամաններ՝ գարեջրի պահպանման համար[3]:

Պեղածո մնացորդներում առանձնապես աչքի են ընկնում ոսկեհատ (խարջի), մսխալի (Արարատ), հաշաբաշ սև խաղողի մի քանի տեսակներ, իսկ բանջարաբոստանային կուլտուրաների շարքում՝ ձմերուկ, սիսեռ, ոսպ[4]: Հայկական լեռնաշխարհն այս դարաշրջանում ուներ ոռոգման լայն համակարգ: Բացի գետերից օգտագործվում էին նաև ջրային այն պաշարները, որոնք գոյանում էին լեռնային աղբյուրներից, լճակներից, լեռների ծալքերում մթնոլորտային տեղումներից կուտակված ջրերից: Դրանցից պահպանվել են բազմաթիվ, առ այսօր գործող կառույցներ, որոնց թվում

---

[1] Տե՛ս **Пиотровский Б.,** Ванекое царство, М., 1959, с. 133-142, 163-164.

[2] Տե՛ս **Оганесян К.,** Эребуни, Ереван, 1980, Мартиросян А., Аргиштихинили.- Археопогические памятники Армении, 8, Ереван, 1974.

[3] **Аруюнян Н.,** Земледелие и скотоводства Урарту, Ереван, 1981, с. 91-92.

[4] Տե՛ս **Пиотровский Б.,** Ванекое царство, с. 142-147

են Շամիրամի, Մարանդի, Խոտանալուի ջրանցքները, Արմավիրի ջրաբաշխական ցանցը և այլն: Ջրաբաշխական համալիրների մեջ մտնող առավել նշանակալից ջրամաբարներից էր Քեշիշ գյոլը (Քահանայի լիճ)[1]: Ուրարտական ջրանցքները ճարտարապետական առումով բավական զարգացած կառույցներ էին: Դրանք անցնում էին դաշտավայրերով, դժվար հաղթահարելի և տեխնիկապես բարդ մշակման ենթակա տեղանքներով, թունելներով, երբեմն էլ՝ ստորգետնյա արհեստական ուղիներով: Մենուա արքայի (810-786 թթ. Ք.ա) հիմնած ջրանցքի մասին պատմող բազմաթիվ արձանագրություններից մեկը, որ փորագրված է ժայռին, վերաբերում է 72կմ երկարությամբ և մինչև այժմ էլ գործող ջրանցքին: Այն անցկացվել է լեռների լանջերով, և տեղ-տեղ հունն ամրացվել է քարե պատնեշներով, ինչպես նաև ձորերի վրա կառուցված հատուկ կամուրջներով: Ջրանցքը խմելու և ոռոգելու ջուր է մատակարարել Ուրարտուի մայրաքաղաք Տուշպա-Վանին: Հազարամյակների ընթացքում ժամանակ առ ժամանակ այն վերանորոգվել է և ոչ միայն մինչև օրս պահպանել է իր գոյությունը, այլև Վանից բացի, իր ճանապարհին շարունակում է ապահովել 25 գյուղերի ցանքադաշտերի, պտղատու և խաղողի այգիների ոռոգումը հինավուրց Հայոց ձոր գավառում, նաև սպասարկում է 40 ջրաղացներ: Իր վիթխարիությամբ ու ջրառատությամբ Մենուայի ջրանցքը յուրահատուկ տեղ է գրավում ոչ միայն Ուրարտուի, այլև Հին Արևելքի ոռոգման համակարգում[2]: Մովսես Խորենացին այն պարզապես «գետ» է անվանել, ճիշտ այնպես, ինչպես Ուրմիա լճից հյուսիս անցկացված Ուլխուի ուրարտական ջրանցքը Ասորեստանի թագավոր Սարգիս Բ-ն (721-705 թթ. Ք.ա) ուղղակի համեմատում է Եփրատի հետ: Արձանագրություններից տեղեկանում ենք, որ ուրարտական արքաները մեծ ուշադրություն են դարձրել ոռոգման համակարգերի անցկացմանը երկրի գրեթե ողջ տարածքում, այդ թվում՝ Վանա լճի հյուսիսային ափերին, Մանազկերտի շրջանում, Արարատյան բերրի դաշտավայրում: Արգիշտի Ա-ի (786-764 թթ. Ք.ա) արձանագրությունները պատմում են Արաքսի ձախ ափին Արգիշտիխինիլիի շրջակայքում ծավալված ջրանցքաշինության մասին: Այստեղ ջրանցքների թիվը հասել էր հինգի, որոնք բոլորն էլ սնվել են Արաքսի ջրերից[3]: Արարատյան դաշտում աչքի է ընկել նաև Ռուսա Բ-ի (685-645) կառուցած Ումենշինի ջրանցքը, որը սկիզբ է առնել Իլդարունիա (այժմ՝ Հրազդան) գետի՝ Կարմիր բլրին հանդիպակաց ափից, կտրում էր

[1] Տե՛ս **Շարմազան Գ.,** Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962:

[2] Տե՛ս **Арутюнян Н.,** Корпус урартских кпинобразных надписей, Ереван, 2001, с. 90-96. Ի դեպ, Ն. Հարությունյանի այս գիրքը ուրարտական սեպագիր աղբյուրների վերաբերյալ վերջին և ամենահամապարփակն է:

[3] Տե՛ս **Арутюнян Н.,** Корпус урартских кпинобразных надписей, с. 207:

ժայռափոր թունելը և այնուհետև ընթանում Երևան-Էջմիածին խճուղուն զուգընթաց[1]: Ուրարտական արքաների թողած հիշատակարաններում խոսվում է նաև խաղողի այգիների հիմնադրման մասին: Մինուան թողել է Խալդյան դարբասների (Տուշպա քաղաքի), «Մինուայի խաղողուտ»-ի, բուժարանի կառուցման վերաբերյալ: Ընդ որում, անեծքներ են թափում դրանց ոչնչացնողներին: Սարդուրի II-ի (764-735) արձանագրություններից մեկում էլ խոսվում է Սևանի լճի ավազանի երկրների նվաճման մասին մինչև «Ուրտեխի» (Արցախ) սահմանները, իսկ մեկ այլում՝ խաղողի այգի հիմնելու, այն պահպանելու և տուգանք զանցառուների նկատմամբ նշանակելու, իսկ Ռուսա I (735-713 թթ. Ք.ա) արքայի կողմից արհեստական ջրամբար՝ «Ռուսայի ծով» և ջրանցք՝ դեպի Ռուսախինիլի (Տուշպա քաղաքի արվարձան) կառուցելու, ապա խաղողուտ (այգի), անտառ, ցորենի արտ հիմնելու մասին[2]:

Անտիկ ժամանակաշրջանի հին հայերի տնտեսական կյանքի ուսումնասիրության համար էական նշանակություն ունեն հնագիտական տվյալները, որոնք և առատորեն ձեռք են բերվել բազմաթիվ հուշարձաններից, հատկապես Հին Արմավիրի, Երվանդաշատի և Արտաշատ մայրաքաղաքի պեղումներից[3]:

Անտիկ դարաշրջանի ազգագրական տեղեկությունները հիմնականում ստացվում են օտար պատմագրական աղբյուրներից, որոնք այնքանով են անդրադարձել հայերին, որքանով գտնվել են նրանց քաղաքական, մասամբ տնտեսական հետաքրքրության շրջանակներում: Հայաստանի և հայերի մասին հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկություններին մենք անդրադարձել ենք առանձին մենագրությամբ[4]:

Անտիկ Հայաստանի տնտեսական կյանքում երկրագործությունն առանցքային նշանակություն է ունեցել, հատկապես գինեգործությունը, քանի որ բարձրորակ գինու տեսանկյունից միջազգային շուկայում կայուն պահանջարկ ուներ: Անչափ ուշագրավ է Հայաստանից առաքվող փյունիկյան (տիպի) գինու առևտրի կապակցությամբ պատմահայր Հերոդո-

---

[1] Տե՛ս **Меликишвили Г.,** Урартские клинообразные надписи. М., 1960, с. 58, 127, 136-137; **Арутюнян Н.,** Земледение и скотоводство Урарту, с. 31-36; **Пиотровский Б.,** Ванское царство (Урарту), с. 135.

[2] Տե՛ս **Հարությունյան Ն.,** Ուրարտուի գյուղատնտեսությունը// Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 360-361

[3] Տե՛ս **Առաքելյան Բ.,** Հին Արտաշատ, Երևան, 1975, նույնի՝ Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, **Քալանթար Ա.**, Հին վաղարշապատի պեղումները, Երևան, 1935: **Тирацян Г.,** Культура древней Армении (V в. до н.э – III в. н.э), Ереван, 1988:

[4] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 2018, 264 էջ:

տոսի հիշատակությունը: Նա գրում է, որ Հայաստանից Եփրատ գետով փյունիկյան գինի էին տանում Բաբելոն վաճառքի: Այն, որ, իրոք, Հայաստանը գինու արտադրության հայրենիքներից մեկն է եղել, այդ մասին խոսվում է նաև Հերոդոտոսից կես դար անց Հայաստանում անձամբ եղած Քսենոփոնի «Անաբասիսում», որտեղ ընդգծվում են հայկական գինիների մի քանի տեսակների գոյությունը և բարձր որակը: Քսենոփոնը Արմենիան անվանում է «ընդարձակ ու բարեկեցիկ երկիր»: Նա հավաստում է, որ Արմենիայում «պարենն առատ էր», «նրանք արդեն ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատություն, մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամեն տեսակ ընդեղեն»[1]: «Այստեղ գտնվող բազմաթիվ ու բարեշեն տներում մեծ քանակությամբ այնքան գինի կար, որ պահում էին ծեփված հորերում»[2]: Քսենոփոնի այս հաղորդման հիման վրա կարծիք է հայտնվել, որ Վերին Տիգրիսի ավազանի գյուղերում պատրաստում էին հատուկ տեսակի գինի՝ Մադերա տիպի, որը ջերմային մշակման էին ենթարկում դրսում՝ արևի տակ, կրաշաղախով ծեփված հորերի մեջ: Արածանիի հովտի գյուղերում Քսենոփոնի և նրա ընկերների ու զինվորների ճաշակած «բուրավետ հին գինիները» ամենայն հավանականությամբ եղել են մուսկատ տեսակի: Մուսկատ գինիներ, հավանաբար, Հայկական լեռնաշխարհում արտադրվել են դեռևս ուրարտական ժամանակաշրջանից: Այդ եզրակացությանն է հանգել Ա. Հարությունյանը՝ վերլուծելով «Լուվրիի աղյուսակի» տվյալները[3]:

Ինչ վերաբերում է գարեջրին, ապա պատմագրի վկայությամբ Հայաստանում գարեջուր արտադրել են Ք.ա V-IV դդ.[4]: Հայերը գարեջրի պատրաստման համար օգտագործել են հացահատիկ՝ գարի, կորեկ, բույս (գայլուկ) և այն խմել են եղեգներով: Այստեղից էլ ծագել է այդ խմիչքի հայերեն անունը:

Քսենոփոնը հաղորդումներ ունի նաև Հայաստանում պատրաստվող օծանելիքների մասին: Ըստ նրա՝ V դարում Արածանիի հովտում Արևմտյան Արմենիայի կառավարիչ Տիրիբազոսի տիրույթներում բարձրորակ օծանելիքներ են արտադրվել, որոնք եղել են երկու տեսակի՝ քսուքներ, պատրաստված խոզի ճարպահիմքի վրա, և հեղուկ օծանելիքներ՝ պատրաստված քունջութի ձեթի հիմքի վրա: Այդ օծանելիքներից Քսենոփոնը հատկապես առանձնացնում է դառը նշի և պիստակենու

[1] Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, թարգմանությունը՝ Սիմոն Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970, I, 14, էջ 26-27:

[2] Տե՛ս նույն տեղում, IV, 22, էջ 88:

[3] Տե՛ս **Арутюнян А.,** Очерки истории виноградаства и виноделия древней и средневековой Армении, Ереван, 2005.

[4] Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, IV, էջ 93:

(խնկենու) եթերայուղերով պատրաստվածները[1]: Հնարավոր է, դրանք հանդիսացել են օծանելիքի տեղական հայտնի «բրենդներ»[2]:

Քսենոփոնը չի զլանում ասել, որ հայերի տներում ամենուրեք «կար նաև ցորեն և գարի, և ընդեղեն, և կրատերների (կարաս-Ռ.Ն.) մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին (կարասի շրթներին հավասար, ամանի բերանին – Ռ.Ն.) լողում էին գարու հատիկներ, կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգնի ծայրը բերանին դներ ու ծծեր: եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»[3]: Սա գարեջրի վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունն է: Նա նաև վկայում է, որ հայերը ունեին գինին հորելով պահելու սովորույթ[4]:

Հին հայերի տնտեսական կյանքի մասին ուշագրավ վկայություններ է թողել նաև Դիադորոս Սիկիլիացին՝ (Ք.ա 90-23թթ.) հունական անտիկ պատմագրության աչքի ընկնող դեմքերից մեկը: Հռչակվել է «Պատմական գրադարան» 40 գրքից բաղկացած երկով: Անդրադառնալով Ք.ա 401թ. հունական 10 հազարանոց զորքի նահանջի ճանապարհին հանդիպած դժվարություններին, պատմիչը գրում է, թե կարդուխների երկրից Հայաստանի սահմանն անցնելով՝ փրկվում են ոչնչացումից: Նա բառացի գրում է. «Եվ բոլորն էլ կատարելապես կոչնչանային սովամահ լինելուց, եթե կարճ ճանապարհ անցնելուց հետո չպատահեին (արմենների-Ռ.Ն.) պարենաշատ գյուղերի, ուր մարդիկ վայելում էին կյանքի համար անհրաժեշտ բարիքների առատությունը»[5]: Գրքի XIV, գլ. 29, 1-6 հատվածում էլ նա գրում է, թե «այստեղ (արմենների երկրում-Ռ.Ն.) երկիրը ավելի բերքառատ է, քան մեկ այլ վայրում: Ինչպես պատմում են յուրաքանչյուր որթատունկ տալիս է մեկ մետրետե (32,5 լիտր) գինի, իսկ թզենիները երբեմն տալիս են 10 մեդիմնոս (1 մեդիմնոսը 52,5 լիտր է) չորացրած թուզ: Հնձելու ժամանակ լքված ցորենը հողին ընկնելիս, առանց ցանված լինելու, ծլում է և հասցնում առատ բերք: Տեղաբնիկներին հայտնի է մի ծառ, արտաքինով կաղնու նման, որի տերևներից մեղր է կաթում, ոմանք այն հավաքում են և առատորեն պօգտագործում իրենց կարիքների համար: Այստեղ կա նաև թռչող մի կենդանի, որը կոչում են **անթրեդոն**: Սա մեղվից փոքր է, բայց մեծագույնս օգտավետ: Այն թափառում է սարերում և բազմապիսի ծաղիկներից (նեկտար) հավաքում ու բնակվելով ժայռերի խո-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **Փալանջյան Ռ.,** նշված ատենախոսություն, էջ 12:

[3] Տե՛ս Քսենոփոն, «Անաբասիս», IV, 26 էջ 97:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 14, Հին հունական աղբյուրներ, Բ, Դիոդորոս Սիկիլիացի», թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985, գիրք XIV, գլ. 28, 1-5:

ռոչների և շանթահարված ծառերի փչակների մեջ՝ այնտեղ խորիսխ է պատրաստում և արտադրում այնպիսի մի հեղուկ, որն իր քաղցրությամբ մեր մեղրին շատ չի զիջում[1]: Տերևների վրա նստող այդ մեղրանման հյութը սասունցիները անվանում էին գազպեն (մանանա), որն օգտագործվել է որպես սնունդ և դեղամիջոց: Մեղրանման այդ թանձր հյութը պահում էին կարասներում և գործածում մինչև նոր բերքահավաք[2]:

Հույն աշխարհագիր Ստրաբոնի (Ք.ա 63թ. – Ք.հ. 20թ.) «Աշխարհագրություն» գիրքը՝ իր բազմահարուստ տեղեկություններով յուրատեսակ հանրագիտարան է Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի երկրների, այդ թվում նաև Հայաստանի ֆիզիկական աշխարհագրության, պատմության, ինչպես նաև տնտեսամշակութային բնութագրի ուսումնասիրության համար[3]: Ստրաբոնը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայերի տընտեսական զբաղմունքների մասին: Ըստ նրա՝ Հայաստանն իր բարեխառն կլիմայական պայմաններով ամեն տեսակ բարիքների երկիր է, որտեղ ժողովուրդը առավելապես երկրագործությամբ է զբաղվում: Աշխարհագիրն իր աշխատության մեջ ակնարկային նկարագրություն է թողել տեղական վարող գործիքի՝ արորի մասին: Ժամանակի արորն ունեցել է բնականից ծռված ծառի ճյուղի տեսք, որի ծայրը հայերն անվանում էին «կեռ», և որի վրա հագցվում էր երկաթե խոփիկ, իսկ վերևի ճյուղը կոթի՝ «մաճի» դեր էր կատարում: Հետագայում Արցախում «կեռ», «կըռ» տերմինը տարածվեց նաև սովորական արորի վրա[4]: Ստրաբոնն ունի նաև աղվանական արորի նկարագրությունը. «Աղվանական արորը (ի տարբերություն հայկականի) երկաթե խոփիկ չուներ և կազմված էր ամբողջությամբ փայտից»[5]: Այգեգործության վերաբերյալ ուշագրավ են Ստրաբոնի հետևյալ հավաստումները. Հայկական Միջագետքը համարում այգեշատ և գինեվետ երկիր, Մելիտինեն դիտում է իբրև ամբողջապես բերքատու ծառերով ծածկված երկրամաս, որտեղ պատրաստվում էր ձեթ և մոնարիտ կոչված գինի, որը հունական գինիների մրցակիցն էր (գիրք XII, II, 1): Հայաստանը համարում էր խաղողի, թզի, ցորենի ու մեղրի երկիր, ինչպիսիք Վիրքը և Մարաստանն էր: «Ասում են, թե մի որթատունկը տալիս է մի մետրետ՝ 39

[1] Տե՛ս նույն տեղում, գիրք XVII, գլ. 75., 3-6:

[2] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Հայոց ազգակցական համակարգը (XIXդ. երկրորդ կես – XXդ. սկիզբ), Երևան, 2012, էջ 212:

[3] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին // «Պատմաբանասիրական հանդես», 2015, թիվ 1, էջ 208-230:

[4] Տե՛ս **Еремян С.,** Происхождение некоторых орудий пашенного земледелия в древней Армении//Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղիացիության պատմության, հ. 1, Երևան, 1964, էջ 23:

[5] Օտար աղբյուրները հայերի մասին: Հունական աղբյուրներ-1: Ստրաբոն. Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, գիրք XI, XIV, 4-5:

լիտր գինի, մի թզենին՝ 60 մեդինոս թուզ[1], իսկ հասկից ընկած մի ցորենը նորից է բուսնում, մեղուները ծառերի մեջ փեթակ են շինում, և մեղրը տերևներից հոսում է: Նույնպես լինում է Մատիանում՝ Մարաստան և Շակուշենում և Արաքսենում՝ Հայաստան: Բայց այդ տեղերում այնքան զարմանալի չէ այդ, որովհետև ավելի հարավ են, քան Վրկանիան, և մյուս երկրներից տարբերվում են չափավոր բարեխառնությամբ» (գիրք II, I, 14, գիրք XI, VII, 2): Հայ մարդու հող մշակելու բացառիկ տաղանդի շնորհիվ մեր երկիրը, ըստ հույն գիտնականի հավաստումների՝ լի է եղել պտղատու ծառերով, գինու և հացի առատ պաշարներով:

Հունական պատմագրության մեկ այլ կարկառուն ներկայացուցիչ Պլուտարքոսն (Ք.հ 45-127) «Զուգահեռ կենսագրություններ» («Զուգակշիռք») աշխատության մեջ Հայաստանը համարել է հարուստ ու ծաղկուն երկիր. «Երբ հասան (հռոմեացիները) Արաքս գետը, որը Մարաստանը բաժանում էր Հայաստանից... Իսկ երբ բարեհաջող հասնելով գետի հանդիպակաց ափը՝ ոտք դրեցին հայկական հողի վրա, այն ժամ, ասես բաց ծովում երկար թափառումներից հետո առաջին անգամ ցամաք տեսած, նրանք համբուրում էին քարերն ու ավազը և, իրար գրկելով, ուրախությունից լաց էին լինում: Այնուհետև ընթանալով հարուստ ու ծաղկուն երկրի միջով, նրանք այդքան դաժան զրկանքներից հետո խիստ շատ կերան ու խմեցին...»[2]: Պատմագիրն ակնարկ ունի նաև տեղական անխառն գինու թնդության մասին. «Ամեն մարմին չէ, որ կարողանում է դիմանալ մեծաքանակ անխառն գինուն» (Լուկուլլոս, 25): Ի դեպ, հին հույները գինին կրատերի (կավե անոթի) մեջ ջրի հետ խառնելով, թնդությունը թուլացնելով խմելու սովորությունն ունեին հնուց ի վեր[3]:

Рафик Нагапетян, Армянское нагорье - древнейший центр земледельческой культуры (по археологическим (IX – середина I тыс. до н.э.) и историографическим материалам античной эпохи) - В статье рассматриваются значимость и ценность материалов, касающихся орудий труда, принадлежащих культурным слоям разных археологических эпох периода IX - середины I тыс. до н.э., а также обусловленных ими разных сфер культуры земледелия: зерновых культур, методов и средств

[1] Հին հունական չափ, որ պարունակում է 51,84 լիտր, 60 մեդինոսը՝ 3110 լիտր:

[2] Տե՛ս Պլուտարքոս, «Զուգահեռ կենսագրություններ», կազմեց, հին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Ս. Կրկյաշարյան, Երևան, 2001, Անտոնիոս, 49:

[3] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Քսենոփոնի «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» աշխատությունները՝ հայ ազգագրության անտիկ դարաշրջանի բացառիկ սկզբնաղբյուրներ // «Պատմություն և մշակույթ». Հայագիտական հանդես, ԵՊՀ Պատմության ֆակուլտետի գիտական հոդվածների ժողովածու, 2015, էջ 368:

полеводства, садоводства, виноградарства, самых древних центров виноделия, - их роли и значения.

Комментируются также обладающие не меньшей источниковедческой ценностью свидетельства греческих и римских авторов античной эпохи: Геродота, Ксенофонта, Диодора Сицилийского, Страбона, Плутарха и других - о культурно - экономической жизни древней Армении. Большое внимание уделяется материлам, касающимся экспорта армянского вина на международный рынок еще в V в. до н.э., широкого ассортимента вин, изготовления, хранение и использования пива, их качественных и вкусовых характеристик, многовекового опыта и навыков армянского народа, а также древних традиций армянского гостеприимства.

Настоящая статья может представлять интерес для студентов, специализирующихся на этнографии, археологии и культурологии, а также для тех, кто изучает историю и культуру Армении.

Rafik Nahapetyan, Armenian Highlands is the Most Ancient Center of Agricultural Culture (According to Archaeological (IX - the middle of I millennium BC) and Historiographic Materials of the Ancient Era) - The article discusses the significance and value of materials related to the work tools belonging to the cultural layers of different archaeological epochs of the period of IX - the middle of I millennium BC, as well as the different spheres of agricultural culture caused by them: grain crops, methods and means of field cultivation, gardening, viticulture, the most ancient centers of winemaking, their roles and meanings.

The evidences of Greek and Roman authors of the ancient era, i.e. Herodotus, Xenophon, Diodorus of Sicily, Strabo, Plutarch and others, on the cultural and economic life of ancient Armenia, which also have great source study value, have been also commented on. Great attention has beem paid to the materials related to the export of the Armenian wine to the international market back in the 5th century BC, a wide range of wines, the manufacture, storage and use of beer, their qualitative and taste characteristics, centuries-old experience and skills of the Armenian people, as well as the ancient traditions of the Armenian hospitality.

The present article may be of interest for students who are specialized in ethnography, archeology and cultural studies, as well as for those who study the history and culture of Armenia.